

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ^{*)}

ՎԷՊ

ՀԱՆՐԻ ԲՕՐԴՕԻ

IV

Բոլորաձև մի մեծ ժայռ, ծածկուած փրկիկներով և փոքր թփերով բաժանուած է Մենտոնը Տալուարից: Այդ ժայռը հրուանդանի նման ներս է ցցուած լճի մէջ և նրան յարակից է Աննէսին: Գրեթէ ուղղահայեաց բարձրացող այդ ժայռից բացուած է մի լայն հորիզոն մերձակայ սարերի վրայ:

Ժայռի գագաթին շատ մօտ գտնուած է մի բացաստան: Կոմսուհի Ֆերրեզին շատ սիրում էր գալ այդ առանձնացած և վայրի տեղերը կարգալու իր հայրենիքի սիրեցեալ գրողների գրաւիչ բօմանները: Այդտեղ յաճախ գալիս էին Ժաննի և Աննի Մէրանները, որոնք տաժում էին դէպի Կոմսուհին այնպիսի մի ոգևորուած պաշտամունք, որ յաճախ երևում է երիտասարդ աղջկանց մէջ իրանց վրայ ուշադրութիւն դարձնող երիտասարդ կանանց վերաբերմամբ: Նրանց հայրը սկզբում զժգոհութեամբ էր վերաբերւում այդ ծանօթութեան, որ կապել էր կինը իր սովորական անհոգութեամբ: Նրան վրդովում էին այն անորոշ լուրերը, որ տարածուած էին գեղեցիկ իտալուհու և Ժակ Ալվարի մասին, բայց սովորած լինելով չը հաւատալ գաւառական բամբասանքներին, նա կամաց-կամաց սկսեց մատերի արանքով նայել այդ նոր ծանօթութեան վրայ:

Նստելով խոտի վրայ, Կոմսուհի Ֆերրեզին կաղմում էր

*) Յե՛տ «Մուրճ» № 2.

վնջիկ ծաղիկներէից, որ նա հաւաքել էր, բարձրանալով կածանով, Զոկելով և դարսելով ծաղիկները նա կիսաձայն երգում էր մի թախծալից և սրտառուչ ձկնորսական երգ:

Առաւօտ էր: Կապուտակ երկինքը և ծովային թարմ քամին հաճելի և ուրախ մտքեր էին ներշնչում, բայց չը նայելով դրան, կոմսուհին շատ տրտում էր: Աչքերի տակի գծերը և նրա դէմքի անհաւասար դոյնը ցոյց էին տալիս արդէն նրա մարող երիտասարդութիւնը, բայց նրա ճկուն կազմուածքը դեռ չէր կորցրել նախկին հմայքը:

Ծաղիկները և երգերը նրան շատ քիչ էին գրաւում. նա մոռածում էր իր սիրոյ մասին:

Գալով Հոռոմից Սալոյի այս անկիւնը, որի թարմ օդը անհրաժեշտ էր իր հիւանդոտ մարդին, նա շատ տխրում էր Իտալիայի գեղեցիկ երկնքի և աշխարհիկ ուրախութիւնների համար, որոնք գոհացնում էին նրա բաւական թեթեամիտ բնութիւնը: Երիտասարդ կնոջ ձանձրութիւնը և տխուր կեանքը հիւանդ մահդու կողքին, վերջապէս այն երկրիցը թէ կը կորցնի իր երիտասարդութիւնը, չը փորձելով այն բոլոր ուրախութիւնները, որ նա կարող էր տալ, — այդ բոլորը միասին ձգեց նրան ժակ Ալվարի գրկի մէջ: Նա անձնատուր եղաւ, առանց սեթեւեթի և առանց սակարկութեան, այդ լիբը նայուածքով և ցինիկ գեղեցիկ երիտասարդին: Այդ անագան կիրքը ստրկացրեց նրան: Նրա սիրեկանը վարում էր նրա հետ կոպտութեամբ, բայց նա, կոմսուհին, արհամարանք չը զգալու համար ինքն դէպի իրան, աշխատում էր համոզել իրան, որ իր հլութիւնը և թուլութիւնը հետեանք են իր սրտային քնքշութեան, մինչդեռ իսկապէս նրանք կրում էին աւելի զգայասիրական բնատրութիւն:

Կոմսուհին յիշեց, թէ ինչպէս մի քանի ժամանակ առաջ Ալվարը յայտնեց նրան իր ամուսնութիւնը և նա լացեց, խճողւելով նրան դեռ սպասել մի քանի տարի: Նա հաւատացնում էր նրան, որ, ինքը շուտով կը պառաւի, բայց ժակը ի պատասխան միայն ծիծաղում էր: «Այդ այնքան էլ կարեւոր չէ, — ասաց նա. — ևս ամուսնանում եմ, որովհետեւ ինձ պէտք են միջոցներ և պատգամաւորի տեղ: Հօ չը պէտք է նախանձես դէպի այդ փոքր աղջիկը: Հարսանիքիցս յետոյ դու իմ ետեւից Պարիզ կը գոս. դու կը հաւատացնես քո մարդուն, որ նա այնտեղ կը գտնի մտաւոր զուարճութիւններ, որոնք անհրաժեշտ են նրա հիւանդոտ վիճակի մէջ: Ուրեմն, խնդրում եմ, յիմարութիւններ մի արա՛ւ: Նա հնազանդեց ինչպէս միշտ, և պատ-

րաստ էր մինչև անգամ ավստսալ խեղճ Աննիին, որին վիճակուած էր առաջիկայում այնքան տանջանքներ կրել:

«Իսկ եթէ նա այդ աղջկան սիրէց,— փայլատակեց նրա գլխում— Աստուած իմ, որքան ես դժբախտ եմ, որ պաշտում եմ այդ մարդուն»:

Նրա կողքին լսուեց տերեւների շխլոց, որ ստիպեց նրան վեր թռչել: Անդրապան մի մեծ շուն, սև հրապայտ աչքերով ցայտեց բացաստանի վրայ և վազեց դէպի նրան:

— Կանգնիր— կանչեց նա և սկսեց շոյել շանը:— Այդ դուք էք, սիրելիս, ասաց նա դարձնելով գլուխը Աննիի կողմը, որ երևաց յետ տարած ճիւղերի ետեից:

— Ժաննին յոգնել է և այսօր ես միայնակ եկայ,— արտասանեց երիտասարդ աղջիկը:

Երկու կանայք ըստ սովորութեան գրկախառնուեցին և համբուրուեցին: Աննին խիստ թարմ դէմք ունէր, նրա այտերը կարմրել էին արագ գնալուց և նրա աչքերում փայլում էր երջանկութիւնը: Կոմսուհի փերրեզին իրան առանձին զրաւիչ չէր զգում այդ բոպէին, ուստի և ակամայ զմայլելով աղջկայ վրայ, նա միևնոյն ժամանակ նախանձում էր նրան:

— Ի՞նչ հիանալի առաւօտ: Մի նայեցէք, է,— կոչեց Աննին, քաշ տալով իր բարեկամուհուն մինչև բացաստանի ծայրը:

Ջինջ երկինքը իրանց գլխի վրայ մութ կապուտակ գոյն ունէր, իսկ հեռու հորիզոնում ստանում էր վարդ-մանիշակայլն գոյն: Լիճը ցոլայնում էր ջինջ կապուտակ երկինքը: Ժամանակ առժամանակ նրա մակերևոյթի վրայով անցնում էր մի թեթև սարսուռ, ցոյց տալով այն խորհրդաւոր կեանքը, որ թագնուած էր նրա խորքում: Կանաչների միջից բարձրանում էին Դիւէնի սպիտակ աշտարակները: Այլ կողմում երևում էր Աննէսին և նրա վրայից բարձրանում էր Նէմուրի զղեակը, որ ընծայում էր ամբողջ տեղին միջնադարեան ամրոցի տեսք: Ամեն բանի մէջ զգացւում էր ամարային առաւօտի հմայքը և մեղկութիւնը: Լճից փչող զեփիւռը շոյում էր երկու կանանց երեսը և նրանք զգում էին նրա թարմութիւնը թեթև զգեստի միջից: Աննին, երեսը դարձնելով պէյզափից, նայեց իր բարեկամուհուն: Նա կամոնում էր ամբողջ աշխարհին յայտնել իր երջանկութեան մասին, բայց վախենում էր որ այդ երջանկութիւնը շատ քայտուի էր և կարող էր նախանձ զրգուել աւելի սակաւ երջանիկների մէջ: Նա նկատեց, որ Լէօնօրան տրտում է, ուստի և չէր վստահանում ասել նրան իր գաղտնիքը: Նրա մտքովն ամենին չէր կարող անցնել, որ այդ գաղտնիքը արդէն յայտնի

էր կոմսուհուն իրանից ասաջ և նրա տրտմութեան պատճառը հէնց այդ գաղտնիքն է:

Նրանք վերադարձան դէպի բացաստանը: Կոմսուհի ֆեր-րեզին ծաղիկներով զարդարեց երիտասարդ աղջկայ վարսերը և զգեստը: Վերջինս միայն ժպտում էր:

— Դուք այժմ իսկական հարսն էք, — ասաց ամբողջովին զարդարելով նրան:

Աննին կարմրատակեց:

— Ահ, դու փղբորիկ ծածկամիտ, — շարունակեց կոմսուհին: — Ձեր մայրիկը արդէն հաղորդել է ինձ ձեր հարսանիքի մասին:

— Ո՛հ, — մրմնջաց զարմացած Աննին. — ուրեմն դուք արդէն գիտէք:

Եւ կրտսեր քրոջ շնորհալի շարժումով, որ ցանկանում է տեսնել իրան չոյուած, նա ձեռքերը ձգեց կոմսուհու վզով և համբուրեց նրան:

Լէօնօրայի աչքերը լցուեցին արտասուքով: Նա լացում էր այդ երևիայի դժբախտութեան և իր դժբախտութեան վրայ, իրանց ընդհանուր դաւի վրայ, վշտի վրայ, իրանց ընդհանուր սիրոյ վրայ: Իր մի հատ խօսքով նա կարող էր դեռ փրկել եւ բխտասարդ աղջկան: Աննին զարմացքով նկատեց նրա արտասուքը և հարցրեց.

— Ի՞նչ ունէք: Ասացէք, ինչու էք լացում:

— Ձը գիտեմ, թէ ինչ է պատահում ինձ, — պատասխանեց կոմսուհին, աշխատելով որոնել աւելի մեղմ խօսքեր այն զարհուրելի ճշմարտութեան մասին, որ նա կամենում էր հաղորդել. — Ես յիշեցի այն ժամանակը, երբ ես ինքս հարսնացու էի: Հարսանիքին պատրաստում են սովորաբար, իբրեւ ամենամեծ տօնախմբութեան, իսկ յետոյ, ընկնում են երկնքից երկրի վրայ: Երջանկութեան ակնկալութիւնը աւելի գրաւիչ է, քան ինքը երջանկութիւնը: Ինձ թւում էր, որ դուք մարդի կը գնաք Լիւսիէն Հալանդին. նա այնպէս մեղմ, այնպէս զգայուն է և, ինչպէս ինձ թւում է, աւելի ընդունակ է հասկանալ մեր կանացի բնութիւնը: Դուք չէք ճանաչում Ժակ Ալվարին...

Ի՞նչ խօսքերով նա կարող էր բանալ այդ անմեղ աղջկան, որ Ժակ Ալվարը իր սիրեկանն էր: Բայց այնուամենայնիւ նա կամենում էր այդ անել. խօլական կիրքը սպանել էր նրա մէջ որ և է հպարտութիւն: Ժակի միայն անունը զրգուեց նրա մէջ նախկին նախանձը և յայտնի ցանկութիւնը: Նրա մէջ սաստկացաւ աւելի պահանջը, յայտնել իր գաղտնիքը, մանաւանդ որ նա իրան բողբոլովին պարզ հաշիւ չէր տալիս իր անկման մասին, և չէր զգում ամենափոքր զղջումն, ինչպէս այդ

պատահում է սաստիկ սիրահարուած կանանց հետ: Նա հասկանում էր, որ իր խոստովանութեամբ կարող է գրգռել Աննիի արհամարհանքը և սակայն, ինչ և լինի, նա կամենում էր փրկել նրան և որ գլխաւորն է, միայն իր համար պահել ժակի գգուանքը: Բաժանել ուրիշի հետ նրա սէրը, նրան թւում էր անկարելի: Շուտ թէ ուշ այդ աղջիկը, որ այդպիսի անսահման վստահութիւն ունէր դէպի իրան, միննոյն է՝ կ'իմանայ իր մարդու դաւաճանութիւնը: Իր խոստովանութեամբ նա միանգամից կ'ազատէ և իրան և նրան:

Աննին սպասում էր յուզուած, լուրջ դէմքով՝ պատրաստ պաշտպանելու իր նշանածին: Այն խօսքը, որ պէտք է արտասանէր կոմսուհի Ֆերրեզին, արդէն պատրաստ էր նրա մտքում: Նա պէտք է պարզապէս ասէր.

—Դուք չէք կարող մարդու գնալ ժակին: Նա իմ սիրեկանս է:

Այդ խօսքից յետոյ նա կարող էր խօսել նրա հետ, պաշտպանելով իր սէրը, որ այդ աղջիկը պէտք է հասկանար, որովհետև ինքն ևս սիրում է: Թող լինի այն, ինչ կը լինի, բայց ամենից առաջ անհրաժեշտ է ասել ճշմարտութիւնը. դա վճռական խօսքն էր և նրա մէջն էր գտնուում ազատութիւնը:

Բայց թշուառ կիներ չարտասանեց այդ խօսքը:

Մի խորհրդաւոր առաքելութիւն կար Աննիի աչքերում: Երիտասարդ աղջկան երբեմն անուանում էին լռակեաց, որովհետև նա ընչ էր խօսում և աշխատում էր միշտ աչքի չընկնել: Բայց նրա կապուտակ աչքերը ցոլացնում էին մի այնպիսի մաքուր և ընտիր հոգի, որ նրան տեսնողը իսկոյն համակուում էր մեծ համակրութեամբ դէպի նա: Սէրը մի նոր կենդանարար փայլ էր տալիս նրա աչքերին: Նրա նայուածքի պայծառութիւնը հիանալի էր այն օրից, երբ նա սկսել էր սիրել. այդ նայուածքը լոյս էր սփռում:

Արդէն հայրը ընկճուել էր այդ նայուածքից, երբ պատրաստուում էր փչրել այդ ամուսնութիւնը: Այս անգամ ևս այդ նայուածքը իր տպաւորութիւնը գործեց: Խօսելուց առաջ տիկին Ֆերրեզին նայել էր Աննիին: Նա կարդաց նրա գեղեցիկ աչքերում այնպիսի մի քնքշութիւն, այնպիսի մի անճուրիւրութիւն դէպի սիրեցեալ էակը, որ նա հառաչեց և լռեց: Նրա ամբողջ մարմինը համակուեց այն անկեղծ կարեկցութեամբ, որով տողորում են տանջուող հասարակ կանայք, ինչպէս և վատից վախեցող զեղիս կանայք: Տիկին Ֆերրեզին նոյն իսկ ցանկութիւն զգաց ծուռ դնել իբրև մի անծանօթ Աստուծու առաջ:

այդ իդէալական անսահման քնքշութեան առաջ, որի հետ չէր համարձակուում համեմատել իր տափական սէրը:

Նա չը մտածեց, որ ջախջախելով այժմ Աննիի սիրտը, նա նրան ամենախորին բարեկամութիւն ցոյց տուած կը լինէր: Շատ կանանց նման նա մտածում էր միայն ներկայ բոպէի մասին: Նա տեսաւ թէ ինչ ահագին վիշտ պէտք է պատճառի Աննիին և սիրտ չունեցաւ այդ անգթութիւնը գործելու:

Տեսնելով որ կոմսուհին լռում է, Աննին հարցրեց.

— Ի՞նչ էիք կամենում ասել ժակի մասին:

— Ես, ոչինչ: Ես կամենում էի ձեզ վախեցնել, որովհետեւ դուք շատ երջանիկ դէմք ունէիք: Այդպէս երջանիկ երեւալը անհաւանական է: Բայց ես ինչս չը գիտեմ ինչ եմ ասում. ես մի քիչ գծի նման եմ այս առաւօտ:

Եւ նա մի ջղային քրքիչ արձակեց:

Աննին վարձատրեց նրա այդ բնական բարութիւնը երկնային պայծառութեամբ մի նոր նայուածքով, իսկ կոմսուհին յիշեց ժակի հետ ունեցած վերջին տեսարանը նրա ամուսնանալու առիթով. «Եթէ որ և է բան դու անես այդ ամուսնութիւնը արգելելու համար, ասել էր նա իրան, ես այլ ևս երբէք քեզ չեմ տեսնիս: Նա դեռ դողում էր յիշելով արտասանած այս «երբէք» բառի կարուկ շեշտը, մինչ ինքը բոլորովին սիրաբորբոք սարսուռում էր իր սիրելեանի համբոյրներէց: Նոյն իսկ իր անձնական բարեկցութիւնը, ինչպէս և կարեկցութիւնը պահանջում էին լռել:

Կոմսուհին ճամում էր յուզուած, ասելով.

— Ես ձեզ վշտացրի. ես խելագար եմ, խելագար:

Այդ ասելով նա առաջացաւ մինչև անդունդի եզրը, մինչև ժայռի ծայրը, որտեղից տեսնւում էր լճի ականակիտ ջուրը:

— Լէ՛նօր, կոչեց Աննին, տալով նրան մտերմական անունը:

Լէ՛օնօրը յառել էր աչքերը խաղաղ ջրի վրայ առանց զլխի պտոյտ զգալու: Նա յետ դարձաւ և միևնոյն ջրուտ ծիծաղով ասաց.

— Մի պարզ ոստումն բաժանում է մեզ մահից: Կարելի է գործել այդ ոստումը աչքերը փակած:

Նրա ընկերուհին բոլորովին գոյնը նետել էր:

Կոմսուհին վազեց դէպի նա և ասաց.

— Դուք դողում էիք ինձ համար, հոգեակա: Որպիսի անհեթեթութիւն: Եթէ դուք իմանայիք...

— Ինչո՞ւ այդպիսի կատակ էք անում ինձ հետ և վախեցնում, — շնջաց Աննին:

—Բայց ես կատակ չէի անում: Միթէ կարծում էք որ ես երբէք չեմ մտածում մեռնելու մասին:

Մատաղահաս աղջիկը պատասխանեց.

—Դուք գեղեցիկ էք, դուք երիտասարդ էք, դուք կարող էք երջանկութիւն տարածել ձեր շուրջը, իսկ ես սարսափելի վախում եմ մահից: Ես բոլորովին տկար եմ զգում ինձ նրա առաջ. ոչ, ես չէի կամենում մեռնել մանաւանդ այժմ:

Տիկին Ֆերրեզին լսեց այս վերջին խօսքերը. նա հարցրեց.

—Ուրեմն դուք շատ էք սիրում նրան:

Աննին ժպտաց այնպէս, որ նշանակում էր. «Դեռ հարցնում էք, որ սիրում եմ», բայց նա ոչինչ չասաց: Նա ետում էր ուրախութիւնից. նրան թւում էր որ չի դիմանայ այդ երկարատև ուրախութեան:

Պայծառ օդի մէջ նրանց ականջին մի երգ հասաւ լճից: Աննին մօտեցաւ անդնդի եղրին զգուշութեամբ. նա նկատեց մի նաւակ, որ սահում էր լճի վրայ: Մի ծեր ձկնորս թիափաքում էր, իսկ նրա ետև տամնուշորս կամ տամնուհինդ տարեկան մի վտիտ աղջիկ, գլխաբաց, ամբողջովին հեղեղուած աքլով, լիաձայն երգում էր: Այդ երգը երկու սիրահարներին պատմութիւնն էր, որոնց բաժանել էին անգութ ծնողները:

Տիկին Ֆերրեզի դիտում էր անդնդի վրայ հակուած ջահէլ աղջկայ անորոշ ուրուադիծը: Նա շատ մանրամասն ուսումնասիրել էր իր գեղեցկութիւնը, ուստի և շատ լաւ ըմբռնեց Աննիի ամբողջ գաղտնիկ վայելչութիւնը, նրա պարանոցի և ուսերի մաքուր գծերը, նրա մի քիչ նեղ և վտիտ իրանի չնորհալի ձկունութիւնը: Թէև նա արհամարհում էր տհաս ձկները, բայց այնուամենայնիւ չը կարողացաւ բռնել իր նախանձը, տեսնելով կոյսի թարմութիւնը և երիտասարդութիւնը:

Փոքրիկ ձկնորսուհու ձայնը հեռանում էր: Սիրահարը երգի մէջ պաշտպանում էր սիրոյ իրաւունքները, չը նայելով յամառ ծնողների անգթութեան:

Նայելով ջահէլ աղջկան, տիկին Ֆերրեզին մտածում էր. «Ինչ եմ ես այս չքնաղ երեխայի առաջ. ոչ ոք չի կարողանայ դիմանալ նրա հմայքին: Ժակը անպատճառ կը գրկէ նրան և ես ապահով եմ որ նրան կը սիրէ, իսկ ինձ նա դէն կը ձգէ իրբև մաշած շորս:

Նա յանկարծ վեր թռաւ, ամբողջովին դողալով նախանձի այդ սուր խայթից: Երգի վերջին յանգը լսուեց հեռուից: Աննին աւելի և աւելի շատ էր թեքւում հեռացող երգը լսելու համար: Սէր էր խօսւում այդ երգի մէջ և այդ այնքան զրաւել

էր նրան, որ նա մոռացել էր վտանգը, կանգնած լինելով ան-
դնդի ծայրին:

Ժակի սիրունին մտածում էր. «Նա սրան կը սիրի, ես չեմ
ուզում որ նա սրան սիրի»: Մի մոայլ կատաղութիւն յուզեց
նրան: Իր ցեղի մէջ սէրը և ոճիրը հղբայրներ են: Սէրը գոյու-
թիւն չունէ, եթէ նա չէ կարող պաշտպանել իրան մինչև
մահը:

Նա մօտեցաւ ջահէլ աղջկան: Մի անծանօթ ոյժ մղում
էր նրան: Լաֆն բացուած աչքերը, ծռմուռած բերանը ցոյց էին
տալիս նրա վայրագ դիտաւորութիւնը: Իսկապէս շատ հեշտ
բան էր լսիլ մի չարժում և աղջիկը կը զրորուէր անդունդի մէջ...

Երբ Աննին յետ դարձաւ, ժպտուն, նա տեսաւ տիկին
Ֆերրեդիին պառկած խոտի վրայ, գլուխը ձեռներէ մէջ և շն-
չասպառ՝ հեծկլտանքից: Նա վաղեց դէպի նա.

—Տիկին, ի՞նչ ունէք, ասացէք, ի՞նչ է ձեր ցաւը. խնդրում
եմ, աղաչում եմ. ևս այնքան ձեզ սիրում եմ:

Իտալուհին վեր կացաւ, ցոյց տուեց նրան իր արտասուա-
թոր գէմքը և հրեց նրան, ասելով.

—Թողէք ինձ, ևս ձեզ ասում եմ, որ խելագար եմ. թողէք
ինձ, մնաք բարեւ:

Եւ այս արտասանելով նա փախաւ:

Աննին հետեւեց նրան աչքերով, առանց մի բան հասկա-
նալու. նա մտածեց.

—Երևի մի մեծ վիշտ ունի նա. ևս բարի կը լինեմ դէպի
նա:

Եւ նա բռնեց Մենտօնի ճանապարհը: Նա ըմբռնել էր եր-
զի հղանակը և մտածում էր իր սեպհական սիրոյ վրայ
մտածելով.

Մարդկանց և բախտին ընդդէմ՝

Միշտ քո մասին կը խորհեմ:

Նա ուրախ էր իր սիրով և չէր կասկածում ամենին որ հէնց
այդ բոպէին աղատուել էր մահից:

V

Պարտիզի մի անկիւնում, որ վերածուած էր ամսոային
սրահի, տիկին Մէրան իր երկու աղջիկներէ և տիկին Ֆերրե-
դիի ներկայութեամբ գիտնական հաշիւներով էր զբաղուած:

—Այսօր կիրակի է, օդոստոսի 13-ը: Եկող կիրակի, 20-ին,
ընարութիւնն է: Պէտք է թողնել որ խեղճ Ժակը մի քիչ հան-
գատանայ: Արդեօք յարմար է քեզ համար հինգշաբթի, սեպ-

տեմբերի 14-ը, Աննի Մի շինական հարսանիք, հիանալի բան կը լինի։ Ամբողջ եկեղեցին կարելի է զարդարել գիրլանդով և մամուռով։ Բայց ինչո՞ւ ոչինչ չես ասում, Աննի. բոլոր հոգսերը իմ վզին են ընկել։

—Նա լրագիր է կարդում։ Թողէ՛ք նրան, ասաց ժաննին ծիծաղելով։

Աննին կարդում էր «Բարձր Սալոյեայի Ապագան», իր նշանածի ընտրողական թերթը։ Նա ցնծում էր կարդալով թեկնածուի ճարտարախօս կենսագրութիւնը, որ ինքն ժակն էր խմբագրել և նրա արաստանած ճառերի մեծադուրդ նկարագրութիւնը։ Սէրը Աննիի աչքում հերոսական սխրագործութեան էր կերպարանափոխում ժակի արագ թռիչքը դէպի իշխանութիւն։

—Նա իրաւունք ունի, յայտարարեց մայրը, որ միշտ հաւանում էր ամեն բան։ Աղջիկը պէտք է հիանայ իր ամուսնով ամուսնութիւնից առաջ։

Եւ դառնալով իր կրտսեր աղջկան, որ օգնում էր նրան տան հոգսերի մէջ, սիրով դրադուած Աննիի փոխարէն, նա ասաց.

—Ամեն բան պատրաստ է այս երեկոյի համար։ Հայրդ հրաւիրել է գրեթէ բոլոր ընտրողական յանձնաժողովին, իսկ նրանք ամենքն էլ շատակերներ են։ Ծաշի ժամանակ նրանք խօսքով կառավարում են ամբողջ աշխարհը և չեն վախում ոչ մի հակառակորդից։

Ժաննին յայտնեց որ կերակուրների ցանկը շատ լաւ է կազմուած։ Տիկին Մէրանը ներողութիւն խնդրեց տիկին Ֆերրեզիից և հեռացաւ։ Վերջինս երկու քայլ հեռու կանգնած, նայում էր ծառերի միջից մայր մտնող արեգակին։ Նա ոչինչ չէր լսում, ոչինչ չէր տեսնում։ Նա յիշում էր բոլոր այն նուաժանացումները, որ կրել էր իր սիրահար, տխուր կեանքում։

Վերէկ ես դնացել էի նրա մօտ. ես այլ ես չը գիտեմ ինչ եմ անում։ Առաւօտեան էր, երբ նա պատրաստում էր զնալ հրապարակական ժողովները. նա հադնւում էր «Դուք այստեղ, ասաց նա ինձ. դու գիժ ես, դու խելագար ես, քաշուիր, կորիր անմիջապէս այստեղից»։ Նա ինձ հետ «դու»-ով է խօսում, երբ կոպտաբար է վարւում. ես փորձեցի ժպտալ. «Ձե՛ որ երբեմն դեղեցկուհի կլիէ՞նա՞նք են դալիս ձեզ մօտ»։ Այդ միջոցին մէկը բարձրանում էր սանդուխներով և նա ինձ մղտցրեց իր չնջարանը։ Բուխարու վրայ ես տեսայ Աննիի լուսանկարը և իմ վերջին, դեռ չը բացուած նամակները։ Ես կամենում էի աղերսել նրան որ նա ինձ սիրի, որքան կարող է սիրել. ես կամենում էի յայտնել, որ ցանկանում եմ մեռնել, ու

բովնետեալ այլ եւս ոյժ չունեմ գիմանալու եւ տանելու նրա նշանածի ներկայութիւնը, որի հետ իմ ամուսինը ամեն օր հանդիպել է տալիս այցելութեան գնալով Մէրաններին: Եւ շատ գթաշարժ խօսքեր էի պատրաստել: Եւ շատ լաւ գիտեմ, որ նրա փառասիրութեան առաջ եւս ոչ մի նշանակութիւն չունեմ: Սակայն եւս ակնկալում էի նրանից մի քանի զթած խօսքեր եւ համբույրներ, բայց եւս չը կարողացայ ոչինչ ասել նրան. իսկ նա նայելով ժամացոյցին, կոպտութեամբ դէպ՝ իրան քաշեց ինձ եւ ապա տուն ուղարկեց ինձ այս անգութ խօսքերով. «Այժմ ինձ հանգիստ թող մինչեւ ամուսնութիւնս. հարսանեկան ճանապարհորդութիւնից երեք շաբաթ յետոյ եւս դարձեալ քոնը կը լինեմ: Նա ծիծաղում էր: Ո՛հ, այդ արհամարհական ծիծաղը: Երբ եւս սանդուխներէջ վայր իջայ, եւ միայն ատելութիւն էի տածում դէպի նա: Եւ կամենում էի խփել եւ խածնել: Եւ ատում եմ նրան. եւ կամենում եմ ատել նրան...»

Աննին վայր գցեց լրագիրը, որ ընկաւ գետնի վրայ այնպէս, որ աչքի էր ընկնում խոշոր տառերով տպուած յօդուածի այս վերնագիրը. «Ռուսներն յնծութեամբ ողջունում է Ալվարի թեկնածութիւնը»: Նա մտածում էր ժակի մասին եւ զգում էր կարծեա ինչ որ մի բան խամրում է նրա հոգու մէջ: Անշուսփելի, տարտամ վշտեր խայթում էին նրան իբրեւ մատաղ փշեր: Երկու ամսուայ մէջ նա կարող էր մի առ մի համբույր իր նշանածի արտասանած քնքոյշ խօսքերը. այն էլ նա արտասանել էր օտարների ներկայութեամբ, այնպիսի ձայնով, որ ամեն մարդ կարող էր լսել, իսկ ինքն Աննին կարծում էր: Նա ամենին չէր սիրում առանձնութիւնը, որ Աննիի աչքում սիրոյ անհրաժեշտ պայմանն էր: Ժակը միշտ խօսում էր հրապարակաբար. շատ անգամ եւ նա խօսում էր Աննիի հետ իր ընտրողական պայքարների եւ քաղաքական ասպարիղի մասին: Աղջիկը զգում էր, որ այդ փառասիրութիւնը շատ վիշտ կը պատճառի իրան, բայց նա աշխատում էր յաղթել իր այդ տիրութիւնը: Ինչպէս կարելի է պահանջել ժակից այդքան նուրբ քնքուշութիւններ, ինչպէս կարող է նա զանգատուել, քանի որ ժակը ամեն երեկոյ իր հասարակական պարտաւորութիւնները կատարելուց յետոյ գալիս էր դուարճացնելու նրան: Չէ, այդքան շատ պահանջներ անել չէ կարելի: Ի հարկէ երբ ժակը ընտրուի, նա անբողջովին կը նուիրուի իրան: Ութ օրից յետոյ նա այլ եւս մեղամաղձոտ մտածմունքներ չի ունենայ:

Ժակի նշանածը եւ սիրուհին իրանց մտածմունքների վերջում միմեանց երեսին նայեցին: Աննին մի ժպիտ ուղղեց իր մտամոլոր բարեկամուհուն, որի տարօրինակ շարժումներից նա

ըմբռնում էր, որ մի ներքին վիշտ կրծում է նրան, բայց չէր կարողանում հասկանալ թէ ինչ վիշտ է, իսկ տիկին Ֆերբեզին դուշակելով ջահէլ աղջկայ մտատանջութիւնը, ուրախացաւ, որ նա ապահով չէ իր երջանկութեան մասին: Սակայն նա այնքան էլ չէր ատում իր նախանձորդին, ինչպէս երևակայում էր. նա մինչև անգամ կարողանում էր առանց ցաւ զգալու բռնել նրա ձեռքը և համբուրել նրա այտերը: Ժակը դեռ չէր զրկել այդ դողափոփ մարմինը: Դեռ մի ամիս կար մինչև որ նա իր կինը կը դառնար: Ով դիտէ, մի ամսուայ մէջ ինչ դէպքեր կ'անցնեն: Կոմսուհին որ սնտոխապաշտ էր և անձնատուր էր լինում ցնորական յոյսերի, հաւատում էր պատահումներին և նոյն իսկ ջերմ ազօթք էր ուղղում Աստուծոյ իաակերէն, որ իր սիրեկանին միայն իր համար պահէ:

Երեկոյեան զեփեռը սկսեց զովացնել ցերեկուայ տօթից ծանրացած օդը: Տիկին Մէրան տեսնելով իր խօսակիցներէ յամաւ լուծութիւնը և չը կարողանալով լռել, խօսում էր իր վարդի թփերի հետ: Ժաննին ճեմում էր ծառուղիում, գլխաբաց, արևակի մայր մտնելը տեսնելու համար: Նա վերադաձաւ վաղելով:

— Ահա պարոն Ֆերբեզի անգլիական ապրակը:

Նա բոլորովին ուրախ էր հաղորդելով այդ լուրը. նրա կարմրատակած թշերը գեղեցիկ էին իբրև ծաղկաւէտ գարուն. բայց ոչ ոք չէր նայում նրան:

Կոմս Ֆերբեզին և Ղուսիէն Հալանդը իջան կառքից. վերջնիս դէմքը կարմրել էր օդից և նրա անիոյթ սովորական քայլուալքը ստացել էր աւելի առնական ձև:

— Օրիորդ Աննի, ասաց կոմսը քաղաքավարի ձևով, մենք ծեր նշանածի կարապետներն ենք: Նա այստեղ կը լինի կէս ժամից յետոյ: Այս բոպէին նա ցնծում է իր յաղթութեամբ: Նրա ճառերը հիանալի են:

Ժակի ամուսնութիւնը ցրում էր իր ամուսնական երկիւղները: Երկու ամսից ի վեր նա գովաբանում էր երիտասարդին ճոռմարան ֆրազներով և աշխատում էր մտցնել ծածուկ նրա ծրարի մէջ մի քանի յօդուածներ իր սիրած՝ անհատական ազատութեան մտքով:

Ժաննին ասաց Լիւսիէին.

— Դուք բարեցիք ամենքին բացի ինձանից, պարոն Հալանդ:

Իսկ տիկին Մէրանը պահանջեց, որ իրան հաղորդեն հրապարակական ժողովի մանրամասնութիւնները: Կոմսը, բռնուելով հազից, ստիպուեց գիշել խօսքը Լիւսիէին:

— Թեկնածուն ճառում է մի բարձրաւանդակ պատշգամբից:

տեղ-տեղ նրա ձայնը դողդողում է. կանայք լացում են, ծերունիները շարժում են գլուխները, հաւանութեամբ ծիծաղելով, իսկ երիտասարդները երջանիկ ժպտում են: Ազատութեան, արդարութեան և եղբայրասիրութեան խօսքերը թնդում են երեկոյեան վճիռ և հնչուն օդի մէջ: Ունկնդիրները հիացած են: Ահա բոլորը:

— Դուք շատ կրճատում էք, ասաց տիկին Մէրանը՝ Աննիին հաճոյք պատճառելու համար:

— Ուրեմն ես կը շարունակեմ երեակայեցէք մի ամբոխ հինգ հարիւր հոգուց բաղկացած, տղամարդիկ բաճկոնալիներով կամ միայն շապիկներով, կանայք օժնական զուարթ գգեստներով, հաւաքուած մեծ չինարների հովանու տակ՝ նրանց առջևի բարձրաւանդակը, որտեղից ատենաբանը խօսում է իր ճառը, սամբոզիովին լուսաւորուած է արեւով: Կամենում էք գաղափար կաղմկել թեկնածուի հոետորութեան մասին: Շատ տաք էր և տրեւ ուղղակի այրում էր ժակի գազաթէր: Մի քաջ գիւղացի նկատեց այդ, որոնց մի աթոռ, բարձրացաւ վրան և հովանաւորեց մեր բարեկամին իր լայն կարմիր հովանոցով. բայց ժակը սիրում է ճառելիս ձեռները շարժել: Խեղճ մարդը յուսահատ ջանքեր էր անում հետեւելու նրա շարժումներին և յարմարեցնելու իր անպատրաստից վրանը նրա շարժածքներին. նա կատաղաբար շարժում էր իր աթոռը. թեկնածուն մոլեկնաբար դռում է, գիւղացին բաղմատեսակ շարժումներ էր անում, իսկ հովանոցը գծադրում էր օդում կոր գծեր: Սակայն ոչ ոք չը նկատեց այդ տեսարանը:

Աննին յանդիմանական ակնարկ ձգեց երիտասարդի վրայ: Առնանթեթի ծաղրը վերաւորում էր նրան: Լուսիչնը ախոսաց որ զուր տեղ նրան վիշտ պատճառեց:

— Նա մի անվերջ հոետոր է, պաթետիկ շարժումներով, ասաց կոմս Ֆերրեզին, որի հաղը կտրել էր: Ոչ ոք չը հասկացաւ թէ ինչ էր կամենում նա դրանով ասել. արդեօք ժակը կարող է խօսել անվերջ, թէ՛ ճշմարիտ նա հիացած էր նրա ճառով:

— Նրէկ, Դուստարում, ճերմակ զգեստ հագած փոքրիկ աղջիկներ նուիրեցին նրան դաշտային ծաղիկների վնջեր, որոնց բուրմունքը ծածկեց մեղ. նրանք մեկնեցին իրանց սիրուն ճակատները նրա հայրական համբոյրին: Տալլուարում, կորովի պատանիներ տարան նրան իրանց ուսերի վրայ և նա շարժում էր, չըջապատուած փառքով, իրրե մի աստուած:

Տիկին Մէրանը, որ չէր մոռացել մտածել ճաշի մասին, հարցրեց Լիւսիէնին.

— Գիտե՞ք ով կը գայ այս երեկոյեան ամսամուս հետ:

—Ժակը, նոտար Շարաւէն և Բրէնա փաստաբանը, որ Թօնի քաղաքապետն է։ Սա նախանձում է որ Ալվարը ժողովրդականութիւն է ձեռք բերում իր համայնքի մէջ։

—Եթէ ժողովը վերջացել է, հապա ինչո՞ւ ժակը չէ գալիս, մըմնջաց Աննին։

—Նա կոնծում է, ասաց Ֆերրեզին, բաժակը ձեռքն նա նման է երիտասարդ Բաքոսի, և շրջապատուած իրան համակրող ամբողջով, ես կարծում եմ որ նա աւելի գրաւիչ է քան երբ իր ճառերն է արտասանում։ Գինետունը, օրիորդ, ժողովրդական պալատն է, իսկ ժողովուրդը, ինչպէս ծաղիկը, պէտք ունի ջրուելու։

Մառուղիի աւազը ճարճատեց ծանր քայլերից և երևաց մի բարձրահասակ ծերունի, որ քայլում էր ուղիղ. նա մի քիչ հաստ էր և շատ կարմիր, մինչև կզակը կոճկուած իր բաճկոնակի մէջ. նա յուզուած էր և դեռ հեռուից գոռաց.

—Ալվարը, ո՞ւր է Ալվարը։

Տիկին Մէրանը դիմաւորեց նորեկին։

—Իսկոյն կը գայ, մայօր. նրան սպասում ենք։

Մայօր Բարօ, գլխաւոր խորհրդականը Ֆալէրժում, ժակի ամենահաստատ պաշտպաններից մինն էր։ Նա առանց որևէ քաղաքական համոզմունքի էր և միայն Ֆրոսսարի դէմ ունեցած ատելութիւնը ստիպել էր նրան Ալվարի դաշնակիցը դառնալ։

Նա եկել էր նաւակով և նոր լուրեր լսելու կարօտ էր։

—Ուրեմն ամեն բան յաջող է գնում, հարցրեց նա Լիւսիէին։

Առանց սպասելու պատասխանին նա ողջունեց տիկին Ֆերրեզին և ջահէլ աղջիկներին, հնացած կօմպլիմէնտներ ուղղելով նրանց, և կամացուկ քաշելով Աննիի ականջից, անոյշ ձայնով ասաց նրան.

—Ուրեմն այդքան փառասէր էք. կամենում էք անպատճառ մինիստրի կին լինել,—որովհետև նա անպատճառ կը լինի։ Բայց որտեղ է այժմ ճառախօսում յաղթանակ տանող մեր պարօնը.—և դիմելով հանդիսականներին աւելացրեց.

—Այժմ Ֆրոսսարը կ'իմանայ թէ ում հետ գործ ունի. իմ նահանգում նա ոչ մի ձայն չունի, և ոչ մի ձայն, լսում էք։ Այդ մարդը ամօթանք է ամբողջ ազգի համար։

—Դժուար թէ նա ծանօթ լինի ամբողջ ազգին, նկատեց Լիւսիէնը։

—Պարոն, առարկեց նրան ծերունին, 1870-ին ես ազգային մի պահակախմբի հրամանատարն էի։ Պարոն Ֆրոսսարը երեք անգամ հրաժարական տուեց, որպէս զի պատերազմ չը գնայ և սակայն նա այսօր նախագահում է ի պատիւ նախկին զօր-

կաննների տրուող ճաշերին և բաժակներ է առաջարկում հայրենիքի բարգաւաճման համար: Նա չքանչան ունի, իսկ ես ոչ:

Նա յայտնեց իր սրտի դարդը. նա միայն մի պահակախմբի հրամանատար էր եղել և այդ պահակախումբը երբեք պատերազմի մէջ չէր մտել, բայց բնականաբար, նա պատերազմասէր ոգի ունէր, և մշակելով իր հոգեբը, նա ծրագրներ էր կազմում Գերմանիայի և ուրիշ ազգերի ջնջման մասին: Ըստ սովորութեան և նրա ունեցած պատերազմական ձևերի պատճառով ամենքը շարունակ կոչում էին նրան մայօր: Նա մի չիտակ, պարզ և սնապարծ մարդ էր: Նա բացատրեց Լիւսիէնին, թէ մի շարադրութիւն է պատրաստում առաջին կայսրութեան ժամանակի սովոյեան զօրավարների մասին:

— Գրեկու ոճը միայն նեղացնում է ինձ, եզրափակեց նա: Եւ նա ցոյց տուեց իր կոպիտ ձեռքը, որ աւելի որսորդական հրացանի քան գրչի համար էր պէտքական:

— Երբ Ֆրոստարին կը վոնտեն պատգամաւորութիւնից, իմ մասին շատ կը խօսան: Բայց անհաւատալի չէ թւում ձեզ, պարոն, որ իմ փոխարէն նա նախապահեց բանկէտին:

Այդ միջոցին, երբ խումբը գնում էր դէպի տուն ծառաստանով, դարբասը մտաւ ընտրողական լանդօն:

— Կեցցէ մեր պատգամաւորը, դուչեց Բարօն իր թնդալից ձայնով:

Ժակը շնորհալի գլուխ տալով և ժպտալով այնպէս էր ձեւացնում թէ ողջունում է երեսկայական ամբոխին: Կապը կանգ առեց և դուրս եկան Մէրանը, Ալվարը, Շարափէ նօտարը և Բրէնա փաստարանը:

— Մայօր, մեծ յաջողութիւն Թօնում, ասաց ժակը, միւսներից առաջ վազելով, լի ակնածութեամբ դէպի այդ հզօր ընդհանուր խորհրդականը:

Թախծալի արտայայտութիւն ասացաւ Աննիի դէմքը. ժակի առաջին մտածմունքը նրա համար չէր: Երիտասարդը միայն այժմ մօտեցաւ նրան և ողջունեց այն մի քիչ ֆամիլեար քնքշութեամբ, որով վարւում էր միշտ նրա հետ: Նրա աչքերը փայլում էին զուարթութեամբ, նրա բերանը ծիծաղում էր. նա դեռ լսում էր ժողովրդի ծափահարութիւնները. յաղթանակի վստահութիւնը գեղեցկացնում էր նրան և Աննին մոռանալով իր ցաւը զմայլուած նայում էր նրան: Ամենքը բարձրացան վերնադասութիւն և մտան ճաշարանը, զարգարուած գեղեցիկ վարդափնջով, որ տիկին Մէրանի պարծանքն էր կազմում:

Պ. Մէրանը, որ սիրում էր համեղ կերակուրներ, ասաց.

—Մարդուն հաճելի դարձնողը միտքն է, իսկ երջանիկ գարձնողը ստամոքսը:

Լիւսիէն աչք ածելով սեղանի վրայ, տեսաւ որ ընտրողական յանձնաժողովը արդէն գործի է սկսել:

—Այս գաւառացիները ամէն բան լաւ մարտում են, մտածեց նա: Դա մի մեծ առաւելութիւն է:

Աննին նստած ժակի կողքին, որին չէր տեսել մի քանի օր, բոլորովին հիասթափուել էր: Նա երևակայել էր թէ իր նշանածը բռնուն խօսքերով կ'արտայայտէ նրան իր ավստոսանքը այնքան երկար բացակայութեան համար, բայց ժակը պատմում էր նրան միայն իր յաղթութիւնը:

—Իսկ թշնամին, գոչեց մայօր Բարօն, իսկ Յրօստաբը. ինչո՞ւ նրա մասին ոչինչ չէք ասում:

Բայց Յրօստաբը պատկանում էր Մէրանին և սա ուրախութեամբ սկսեց իր խօսակցութեան սիրելի առարկան:

—Յրօստաբը հրետոր է ծնուել: Դրանով ես կամենում եմ ասել, որ նրա գլուխը մտածմունքների շատութիւնից այնպիսի հնչուն ձայներ է հանում, ինչպէս ջորեակը դատարկ թմբուկի մէջ: Նա խօսելիս ականջ է դնում ինքն իրան և իր մտքերը խմանում է հանդիսականների հետ միասին, երբեմն ևս նրանցից յետոյ: Մի քանի տարի առաջ նա մի հիւանալի ճառ խօսեց, մամուլի և նրա զեղծումների մասին, այնպէս որ արժէ այդ ճառը մոռացութիւնից հանել. «Նա կամենում եմ ասաց նա հեղինակաւոր ձայնով, ես կամենում եմ մի օրէնք, որը գրչի ազատութիւնը ամենաբացարձակ կերպով յարգելով հանդերձ, այնուամենայնիւ մի քանի սահմանափակումներ մտցնի մամուլի ազատութեան մէջ...»

—Իսկ այսօր, ասաց Լիւսիէնը, նա հաւատացնում է որ հոգևորականութիւնը վտանգի մէջ է և կամենում է տեսնել Յրանսիան յարգուած օտար երկրներից:

Մայօր Բարօն յօնքերը կիտեց. նա իրան հակակդերական էր համարում: Ժակը, որ կարողացել էր այդ միջոցին մի քանի քնքոյշ խօսքերով դրակել Աննիին և վշտացնել թշուառ կոմսուհի Ֆերրեզիին, մի բոպէ ևս չէր կորցնում ընդհանուր խօսակցութեան թելը. նա նկատեց Բարօի զրգռումն և իսկոյն փոխել տուեց խօսակցութիւնը: Դիպլոմատիական մեծ ճարպիկութիւն պէտք էր միութիւնը ընտրողական ժողովի անդամների մէջ պահպանելու համար: Երիտասարդ նստար Շարավէն, վերին աստիճանի ճշտապահ մի մարդ, մի քանի խօսքերով նկարագրեց կուսակցութիւնների վիճակը և գուշակեց թէ ժակը կ'ընտրուի հինգ հարիւր ձայների մեծամասնութեամբ:

— Յաջողութիւնը կապակածելի է, պատասխանեց Բրէնա փաստարանը: Նա սկսեց հերքել և նրա հերքումները պաղ ջուր ածելին ոգևորուած հասարակութեան գլխին: Նա խօսում էր կոպտաբար, բայց կծու հեղինակեամբ, նա մի հին հանրապետական էր և ծայրայեղ կերպով պաշտպանում էր ազատամիտ գաղափարները: Նա ցոյց էր տալիս թէ մինչև որ աստիճան ձանձրալի կարող են լինել այն մարդիկ, որոնց համոզունքը մի անգամ ընդ միշտ հաստատուել է և իրանց հայեաբանների ճշտութեան մասին ոչ մի կասկած չունեն: Նա նախանձում էր ժակին, որ փաստարանութեան մէջ խլել էր նրանից առաջին տեղը, ցանկանում էր որ նա հեռանայ, բայց միևնոյն ժամանակ չէր ցանկանում, որ ընտրութիւնների մէջ նա յաղթող դուրս գայ:

Տիկին Մէրան իր սիրալիք խօսքերով պահպանում էր սեղանակիցների մէջ հաճելի արամադրութիւն: Նրանից խաղաղութիւն էր բուրում և նրա որոշ լաւատեսութեան առաջ թըշնամութիւնները լուծւում էին:

Սուրճը դնացին խմելու պատշգամբի վրայ: Երկրի վրայ հեղիկ-մեղմիկ իջնում էր գեղեցիկ ամառային գիշերը, մինը այն գիշերներից, երբ երկինքը այնքան պայծառ է լինում, որ աստղերը դալկոնում են: Մեղմ ղեկիւնը հանդարտ շարժում էր տերիները և գգւում էր նշանց՝ ծաղիկների բուրմունքով ներշնչուած: Մարգագետնի կտի տեսնւում էր նիրհող լիճը, չըջմուխ լոյսեր ցոլանում էին նրա ոսկեղօծ և մանիշակազօյն ջրերի մէջ: Աւելի հեռուն սարերի անուշ գիծը նկարւում էր աստուերի մէջ և երկրից բարձրանում էր հազարաւոր գիշերային ձայների կանոնաւոր փափուկը, իբրև մեղմ երաժշտութիւն:

Աղմկալից խօսակցութիւնը հետզհետէ դադարեց, որովհետեւ ամենքը ակամայ ենթարկուեցին երեկոյի հմայքին: Խօսքերը մեղմացան և մտածմունքները աւելի լուրջ դարձան, միայն Բարօ հրամանատարը խանդարւում էր լուծիւնը:

Տիկին Ֆերրիսզին սկսեց դաշնամուրի վրայ նորվեզական պարեր ածել, որոնց ոգին հետաւոր էր, տխուր և վայրենի: Այդ երաժշտութեան հնչիւնները հասնում էին պատշգամբին թմրած և չիթ կերպով, ժակը կանգնած կոմսուհու կողքին գիտում էր թէ ինչպէս թանկազին ակները փայլում էին նրա դալուկ մատների վրայ: Երբեմն նա հակւում էր դէպի նրան և խօսում էր նրա հետ: Ժամանին նայում էր նրանց բաց պատուհանից: Աննին ամբողջովին անձնատուր էր եղել գիշերուայ գեղեցկութեանը: Նրա զգացածը այնքան խորունկ և այնքան սիրազեղ էր, որ նա ամբողջովին դողդողում էր այդ զգացմունքից: Մի

հաճելի մեղկութիւն հմայում և միննոյն ժամանակ ճնշում էր նրան: Այդ բոլորն նրա սիրոյ անսահման քնքշութեան առարկան սէրն էր:

Լիւսիէն հետանալով ծխադմբերի խմբից և մոռանալով նոյնիսկ գիշերուայ պայծառութիւնը, դժգոհ և մտախոհ աշխատում էր դատել իր շրջապատողներին և որոշել թէ ինչ տպաւորութիւն են գործել իր վրայ ընտրողական յանձնաժողովի անդամները:

«Ժակի գործունէութիւնը, սօցիալական գաղափարների մասին ունեցած արհամարհանքը և առ ժողովուրդն տածած զգուանքը ինձ միանգամայն ապշեցնում են: Երեկոնները նախքան է դալիս այստեղ,—ոհ, առանց չափազանցութեան— և շատ ուշ վերադառնում է Աննէսի Առաւօտները, շատ կանուխ, նա կառք է նստում, դասաւորում է իր յիշատակագրերը և պատրաստում է իր ճանքը, որ յարմարեցնում է տեղին և պարագաներին, Դեռ այս օրերս նա դատարանում մի գործ պաշտպանեց. բացի դրանից, նա միշտ ինքն է գրում իր լրագրի համար, իր ինքնագովութիւնները ապահովելու համար: Ընտրողներին նա խոստանում է ոսկէ հանքեր և վստահ իր գերազանցութեան վրայ—այդ է նրա թոյլ կողմը—նա ծագրում է նրանց ծածուկ: Սակայն բարոյական զգացմունքից և հասարակական բարիքի ճշմարիտ սիրուց զուրկ մեր դեմօկրատիայի մէջ նա փայլուն տեղ կը գրաւէ:

«Դալով նրա բազմերանգ մասնաժողովին, պէտք է ասել որ նրա միակ ղեկավարը մասնաւոր շահերն են: Մայօր Բարօն կամենում է իր վրէժը առնել ժողովարից, որ չէ կարողացել չքանչան բերել տալ նրա համար: Շարավէ նօտարը աչքը տնկել է պ. Մէրանի և պահպանողական հին կուսակցութեան գործերի վրայ: Բրէնա փաստաբանը, որի գործերը լաւ չեն գնում դատարաններում, կամենում է տեսնել Ժակին հեռացած և պ. Մէրանը, որ ընտիր մտքի, բայց տկար կամքի տէր մարդ է, հիանում է այսօր իր ապագայ փեսայի վտանգաւոր եռանդի վրայ, որովհետև ինքն չունի այդ եռանդը: Ես ինքս, մինչև անգամ ես համաձայնեցի տալ այս փառասէրի օգտին ձայնս, անունս,—որ փառաւոր է եղել այս երկրում,—դրդուած այն խորին անտարբերութիւնից, որով վերաբերում եմ իմ գաւառի բախտին:

«Ունեղձ ժողովուրդ, որ քեզ արեցնում են խոստովանելով ու լքնացնում յիմարութիւններով, որ առանց հասկանալու սիրում ես անզգայ կանգիդատներին, որ կամեցար ինքդ ղեկավարել քեզ, սակայն թափառում ես, աչքերդ կապած, որոնելով երջանկութիւն: Յաւում եմ քո վրայ, բայց քեզ լուսաւորողը ես:

չեմ լինի, խնդրիր լոյս նրանից, որոնք շահագործում են քո խաւարը՝ քո կողոպուտով հարստանալու համար»...

Տիկին Ֆերրեզին դադարեց դաշնամուր ածելուց և եկաւ միացաւ Աննիին ու ժամնիին պատշգամբի վրայ։ Լուսիէն Հալանդը բարձրացրեց աչքերը գիշերային տեսարանի և երեք կանանց խմբի վրայ։

Իտալուհին, յենուելով պատշգամբին, ետեւ դրած ձեռնաբով, մէջքը դարձրել էր լծին։ Նա ասում էր երեկոյի գեղեցկութիւնը, որից մարդիկ չեն կարողանում օգտուել, նա դիտէր որ կանանց գեղեցկութիւնը տոփանք գրգռելով, աւելի տանջանք և աւելի մեղկութիւն է պատճառում։ Երբ նա յետ էր դառնում, նրա մաքուր պրօֆիլը պարզ դժագրում էր գիշերային ֆօնում և նրա այտերի ու պարանոցի գունատ մորթի վրայ կարծես մի ներքին լոյս էր արտափայլում։ Վաղանցուկ բոցերը անցնում էին։

—

Աստղերի տակ, Աննին նմանում էր մի տեսիլքի, նրա դալուկ գեղեցկութիւնը աւելի նրբանում էր և նրա դէմքը շողշողում էր խորհրդաւոր և այնպէս մաքուր, որ կարծես հրեշտակի դէմք լինէր։

Լուսիէնը զննում էր հերթով կնոջ և ջահէլ աղջկան և սրանչափում էր նրանց վրայ, իբրև գեղարուեստական գործերի վրայ։ Նա մոռանում էր ժամնիին, որ փաթաթուել էր մի ճերմակ պլէդի մէջ։ Նրա նորածին գեղեցկութիւնը աչքի էր ընկնում գիշերուայ վճիռութեան մէջ։ Աղջիկը դրել էր կրծքի վրայ իր փոքրիկ ձեռքը, որով պահում էր շալը։ Նա նայում էր երիտասարդին իր մանկական խորունկ աչքերով, որոնց մէջ կարելի էր կտրդալ ծանր մտածմունք։ Նրա շէկ մազերը, մի քիչ բաց, իբրև մի մութ ոսկեդոյն պսակ զարդարում էին նրա ճակատը։

Ամարային այդ գիշերուայ բնութեան անտիկ և տեղական հմայքին նրանք հակադրում էին իրանց վաղանցուկ երիտասարդութեան հմայքը։ Նրանց տեսնելու հաճութիւնը տողորում էր այն նուիրական տխրութեամբ, որով զարդարում է ամեն ինչ որ գեղեցիկ և դիւրարեկ է։

Միտղների խմբից, որին խառնուել էր և Ալվարը, քաղաքական խօսքեր էին լսում։ Միայն կոմս Ֆերրեզին և Լիւսիէնը զմայլում էին այն բերկրանքով, որ պարունակում էր տեսարանը։ Կոմսը չը համբերեց և ասաց ժակի նշանածին։

— Գիշերուայ գեղեցկութիւնը ցոլանում է ձեր նայուածքի մէջ։ Եւ ցոլքը գերադանցում է պատկերից։ Դուք միացնում էք

նրան ձեր գեղեցկութիւնը: Պէյզաժը այլ ևս չէ գրաւում ինձ. ևս գերադասում եմ ձեր աչքերը:

Նա շառագունեց. ինչո՞ւ ժալը իրան այդպիսի շքեղ խօսքեր չէ ասում:

— Դէ լաւ, սիրահարներ, բացականչեց մայօր Բարօն, որ մտնում էր այդ բոպէին սրահը, վախճանալով զովութիւնից և յօդացաւից, և անցնում էր ջահէլ աղջկայ կողքով: Արդէն այրիացել էք այս գիշեր, փոքրիկ աղաւնեակս. ինչի՞ մասին է մտածում մեր մեծ մարդը:

Այս կատախները, որ բարի մարդը զուարճալի էր գտնում, տանջում էին Աննիին: Լիւսիէնը հասկացաւ այդ և այդ անհաճոյութեան վերջ դնելու համար, առաջարկեց գնալ տեսնել լուսնի ծագումը Տուրնէտի վրայ:

— Փեքոսի խորհրդաւոր ժամն է. մենք վեր կ'առնենք այն նաւակները, որոնք սլարանով կապած են լճի եզրին մարգագետնի ներքեւում:

Փոքրիկ ժաննին ծափ զարկեց. Տիկին Ֆերրեզին, Աննին և ժալը հաւանութիւն տուին:

— Խոհեմ եղէք, ասաց տիկին Մէրանը իր աղջիկներին անփոյթ կերպով և խղճմտանքը հանգստացնելու համար:

Ծառուղիների միջով ևրիտասարգները իջան լճի ափը: Երկու նաւակ կապուած էին. ժալը վերցրեց ամենափոքրը Աննիի հետ և առաջինը հեռացաւ ափից. նա կանգ առաւ լճի մէջ տեղ և Լիւսիէնը թիավարելու ուժով հասաւ նրանց:

Լուսինը շուտով պէտք է ծագէր. մի մեղմ շող տարածուել էր հորիզոնում. ապա երևաց սպիտակ լոյսի մի ամբողջ ալիք և ճաճանջների մէջ զծագբուեցին ժայռի խորդ ու բորդ տեղերը: Գիշերուայ հանդիսաւոր լուսեան մէջ, լուսինը երևաց և անջատուեց սարից. նա արագ-արագ բարձրացաւ երկնակամարի վրայ և իբրև աստղերի ցան ու ցրիւ եղած մի փունջ, նա ձգեց լճի ջրերի վրայ պայծառ լոյսի մի երերուն սիւնակ: Այդ սիւնակը խաղ էր անում, խորտակում էր և հոսանքուտ մակերայթի վճիռութեան համեմատ, երևում էր երբեմն իբրև լուսաւոր կէտերի բոլորակ, կամ իբրև ծփուն արծաթեայ սփռոց: Մի նուազուն երկրորդ արեգակ լուսաւորեց բնութիւնը հեռում, նկատուում էին մեղմ փայլ արձակող խորհրդաւոր առարկաներ:

Գիշերաշրջիկները լուռ էին. բնութեան մէջ սփռուած այդ գեղեցկութիւնը նրանք քաղում էին իբրև մի սքանչելի ծաղիկ:

Լուսեան մէջ հնչեց կանացի մի ձայն, կրքոտ, յուզուած

և սքանչելի զեղուն ձայն նա երգում էր իտալական մի բոմանս։ Երբեմն նա մի և նոյն նօտան երկար պահում էր, սաստկացնելով, նա կենդանացնում էր հորիզոնը վշտագին հեշտասիրութեամբ։ Տիկին Ֆերբեզին երգում էր կանգնած նաւակի մէջ, որ պանում էր առաջ լուսնին հետեւելով. աստղի շողերը ընկնում էին նրա երեսի վրայ։

Յանկարծ, ընդհատելով երգը, նա լռեց, ընկաւ նաւակի խորքը և հեծկտալով, յուսահատ շարժումով, բռնեց Լիւսիէնի ձեռքը, որ զգաց նրա եղունգների խրուելը իր մսի մէջ։ Լիւսիէնը տեսել էր, որ առաջին նաւակում, մի քիչ ստուերի մէջ, ժակը գրկեց և համբուրեց Աննին և նա ինքն իսկ յանկարծական անբութիւն զգաց. նա մակաւերեց իտալուհու նախանձը, բայց ոչ նրա նախին կապակցութիւնը։ Եւ նա չը տեսաւ ամենին, նաւակի ետեւի մասում, ժաննին, անշարժ վաթաթուած իր սղիտակ շալի մէջ և արտասուելիս։ Պարզնկայ լուսնի լոյսով, նա կարող էր կարդալ նորատի աղջկայ նայուածքի այն դաղտնիքի անհուն անձկութիւնը, որ նախադրում էր, ինչպէս և սիրոյ ամբողջ քաղցրութիւնը։

— Կերպարաններ, մրսում եմ, ասաց Լէօնօրա Ֆերբեզին, զսպելով իր վիշտը։

Ժակը նկատել էր նրա խռովութիւնը. նա խօսում էր նըշանածի հետ քնքշաբար, բայց ամենին գիշերուայ գեղեցկութիւնը չէր, որ նրան աւելի սիրահար էր դարձնում։ Նա զգացել էր, լճափը թողնելիս, որ Աննի սրտի վրայ աւելի էր ազդում բնութեան գեղեցկութիւնը, քան իր խօսքերը. տիրապետելու տենչը թերադրում էր նրան յաղթել անախկալ նախանձորդին և աւելի սաստիկ յուզմունք պատճառել իրան ընկերացող զգացուն երեխային։

«Լէօնօրան գիժ է, մտածեց նա. նա կարող է ամեն բան աշխնել նշանածիս։ Ես վրէժս կը հանեմ նրանից»։

Աննին, որ մինչև անգամ չէր նկատել երգի յանկարծական ընդհատումը, հասկացաւ միայն, որ ժակի միտքը ուրիշ տեղ է։ Եւ որովհետև այդ բաղէին նաւակը մտնում էր լուսնի շողի մէջ, Լիւսիէնը, որ նայում էր ջահէլ աղջկան, նկատեց նրա դէմքի վշտալի արտայայտութիւնը։ Նա մտածեց.

«Մեր նաւակների ամեն մինը պարունակում է մի կնոջ սէր այդ անտարբեր ժակի համար։ Ամեն մինը կրում է նոյնպէս մի տանջանքի ծանրութիւնը»։

Նա մոռանում էր իր վիշտը, որ կամենում էր անգիտութեան տալ և քաջասիրտ ժաննիի վիշտը, որ այժմ աշխատում էր ժպտալ։

Նաւակները հասան ափին: Նրանք թողնում էին իրանց ետեւից մի լուսաւոր հետք, որի մէջ երևում էին ցուքեր, նման փշուռած հայելիների, որոնք անդրադարձնում էին լուսնին նրա պատկերի կտորները: Երբ թիակները բարձրանում էին, ջրի կաթիլները թափւում էին նրանցից, իբրև գոհարեղէն: Զրի խորութեան մէջ անչափելի տարածութեան վրայ, աստղերը շողջողում էին գունատ փայլով. կարծէք մի հին խորասուզուած երկինք լինէր:

Մտնելով սրահը, Ժակը կատակաբանում էր, թմրած զգայականութիւնից: Արդէն լծում էին կապերը և հիւրերը պատրաստւում էին մեկնել:

—Մի գրկախառնուելէք, է, ասաց մայօր Բարօն, մղելով միմեանց գիրկը երկու նշանածներին:

Ժակը յարմար առիթ նկատեց վրէժը հանելու իրատնայուածք գցելով Լէօնօրի վրայ, նա մի թեթև համբոյր քաղեց Աննիի այտից: Աղջկայ դէմքը շառագունեց. այդ հրապարակական համբոյրը ամօթով էր լցնում նրան. նրա կարծիքով օտարների ներկայութիւնը ոչնչացնում էր գգուանքի ունեցած քրնքոյշ և մտերիմ հմայքը: Սակայն իտալուհին յուզուած, կրծում էր թաշկինակը:

Որպէս զի երկրորդ օրը առաւօտեան կանուխ կարելի լինի գնալ Ֆալբերժի կանտօնը, Ժակը և մայօր Բարօն պէտք է մնային Մենրօնում, ուր տիկին Մէրանը առաջարկեց նրանց գիշերել:

Ժակը կամեցաւ առաջնորդել Լիւսիէն Հալանդին մինչև Ալիւլլիի ծառաստանի մուտքը: Նրանց առաջ, ճանապարհի վրայ, գծադրւում էին նրանց երկար և բարակ ստուերները:

—Էլի մի բազմազրաղ շարաթ, ասաց Ժակը: Ամեն օր հրապարակական ժողովներ, յանձնաժողովների ընդունելութիւններ, լրագրական բանակոիւններ, Հաւատս վկայ, ես ափսոսում եմ, որ ընտրողական շրջանը մօտենում է վախճանին: Այս գործունեայ և մարտնչող կեանքը ինձ շատ դուր է գալիս: Մարդ զգում է, որ ապրում է:

—Սակայն, առաջարկեց Լիւսիէն, դու պէտք է ուրախանաս այդ մօտաւոր ազատութեան համար. դու նշանուած ես, մի մոռացիր այդ:

Ժակը շարունակեց.

—Ինձ դատարկ և երկար պէտք է երևան այն երեք շաբաթները, որ պէտք է անցնեն ընտրութիւնից մինչև ամուսնութիւնս: Ես շտապում եմ ամուսնանալ և հաստատուել Պարիզում:

—Պէտք է մարդ լաւ ճանաչի նշանածին, որ կարողանայ
յետոյ հանդարտութեամբ զեկամարել նրան:

—Ո՛հ, այդ բարդ բանն է. Աննին շատ պարզ է և պաշ-
տում է ինձ:

Պէտք էր շատ հրապուրիչ լինել այդպիսի ծաղրալի անձ-
նագովութիւնն ցոյց տալու համար: Ծանրաբարոյ Լիւսիէնը գի-
տէր այդ վերջին խօսքի ճշմարտութիւնը և նա ինքն իրան
հարցրեց, թէ ինչո՞ւ վշտանում է այդ խօսքից: Ծառաստանը
հասնելուց առաջ յանկարծ նա մնաս բարև ասաց ժակին:

Մի քիչ յետոյ, մինչ ժակը քնած էր արդէն, վերանորո-
գելով իր ոյժերը երկրորդ օրուայ պայքարի համար, Աննին և
Լիւսիէնը, թեկն տուած իրանց պատուհաններին, զննում էին
իրանց անորոշ վշտերը և Լէօնօրա Ֆերրեղին, նստած ամուսնու-
կողքին դէպի Տալուար տանող կառքի մէջ ինքն իրան ասում
էր, որ լաւ բան է մնանելը և որ այնուամենայնիւ մահը զար-
հուրելի է:

Յրանս. Թարգմ. Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

(Կը շարունակուի)